



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Բ Ա Կ Ի Մ Ա Բ Զ Պ Ե Տ

<< 13 >> 04 2015թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

Հ Ա Ն Զ Ն Ա Բ Ա Բ Ա Կ Ա Ն

ՀՀ Շիրակի մարզում 2015 թվականի ապրիլի 20-ից մայիսի 20-ը սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչ տարածքների ընդլայնման միամսյակ հայտարարելու մասին

1. ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին.

ՀՀ Շիրակի մարզի համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում՝ փողոցներում, հրապարակներում, գրոսայգիներում, արտադրական, գիտա-կրթական և մշակութային օբյեկտներին հարող և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներում շրջակա միջավայրի բարելավման նպատակով հայտարարել սանիտարական մաքրման, կանաչ տարածքների ընդլայնման և բարեկարգման միամսյակ:

2. ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը (պետ պարոն Կ.Աբրահամյան).

Համապատասխան շրջաբերական գրությամբ ՀՀ Շիրակի մարզի բոլոր համայնքների ղեկավարներին տեղեկացնել սույն հանձնարարականի մասին և առաջարկել՝

Միամսյակի ընթացքում հետևողական աշխատանք տանել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով համայնքի ղեկավարին վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման ուղղությամբ և հնարավորինս բարելավել կոմունալ տնտեսության ու սանիտարական վիճակը համայնքի տարածքում:

Միամսյակի ընթացքում կազմակերպել միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների շրջակայքերի, հասարակական վայրերի, բնակելի տների, օժանդակ շինությունների ու ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, աղբահանության, ծառատնկման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև վերացնել չհսկվող և չարտոնագրված աղբավայրերը:

Համայնքի տարածքում սանիտարական մաքրման, կանաչ տարածքների ընդլայնման և բարեկարգման ուղղությամբ իրականացված աշխատանքները լուսաբանել գանգվածային լրատվական միջոցներով:

Կատարված աշխատանքների ընթացքի մասին յուրաքանչյուր ուրբաթ ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն:

3. ՀՀ Շիրակի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 111 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովին (նախագահ՝ ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական պարոն Վ.Հարությունյան).

1) ՀՀ Շիրակի մարզի ճանապարհների շահագործումն ու սպասարկումն իրականացնող կազմակերպությունների /անկախ դրանց պատկանելությունից/ և համայնքների ղեկավարների հետ համատեղ կազմակերպել ՀՀ Շիրակի մարզի տարածքում գտնվող ճանապարհներին հարող տարածքների սանիտարական մաքրումն ու չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի լիկվիդացումը:

2) Պարբերաբար իրականացվող շրջայցերի միջոցով վերահսկել սանիտարական միամսյակի շրջանակներում իրականացվող միջոցառումների ընթացքը և անհրաժեշտության դեպքում նկատված թերությունների և բացթողումների վերաբերյալ հարցը ներկայացնել քննարկման:

4. ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ պարոն Ս.Պետրոսյանին.

Ստանձնել սանիտարական միամսյակի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների ընդհանուր ղեկավարումը և համապատասխան գերատեսչական և ՀՀ Շիրակի մարզային ենթակայության ստորաբաժանումների միջոցով վերահսկողություն սահմանել դրանց իրականացման ուղղությամբ: